ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոն՝ Կարեն Անդրեասյան, Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ (այսուհետ՝ ներկայացուցիչ)

Գործուղման վայրը և ժամկետները՝
Ֆրանսիայի Հանրապետություն, 2025 թվականի 15-ից 20-ը ներառյալ.

1) 2025 թվականի նոյեմբերի 15-ից 16-ը Փարիզ,
2) 2025 թվականի նոյեմբերի 16-ից 20-ը Ստրասբուրգ.

Գործուղման նպատակը՝

1) Փարիզում կայացած աշխատանքային այցի հիմնական նպատակը՝ թիվ ARB597/23/VKH արբիտրաժային գործով *(Sinohydro Corporation Limited ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության)* ՀՀ շահերը ներկայացնող Bredin Prat ընկերության համապատասխան ներկայացուցիչների հետ հիշյալ գործի, մասնավորապես՝ դրա ընթացքին և հետագա ռազմավարությանն առչվող հարցերի վերաբերյալ քննարկումները:

2) Ստրասբուրգում եռօրյա աշխատանքային այցի նպատակը, ի թիվս այլնի, որպես միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ (State's Agent) Եվրոպայի խորհրդի (այսուհետ՝ ԵԽ) տարբեր մարմինների բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ ճանաչողական հանդիպումները, վերաբերելի հարցերի և ՀՀ շահերին առնչվող գործերի, առկա մոտեցումների ընդհանուր պատկերի վերաբերյալ քննարկումները:

Հանդիպումները, բարձրացված կամ քննարկված հարցեր՝

1) Փարիզում կայացած աշխատանքային այցի շրջանակներում քննարկվեցին վերոհիշյալ հարցերը, որի արդյունքում կողմերը հանգեցին համապատասխան եզրահանգումների՝ ուրվագծելով վերը նշված արբիտրաժային գործի ռազմավարությանն ու կոնկրետ ընթացիկ հարցերի վերաբերյալ մոտեցումները: Հաշվի առնելով արբիտրաժային վարույթների **գաղտնիության կանոնը,** ինչպես նաև տվյալ հաշվետվության հասանելիությունը՝ հիշյալ քննարկումների վերաբերյալ լրացուցիչ մանրամասները, ըստ անհրաժեշտության, կտրամադրվեն այլ, այն է՝ սահմանափակ հասանելիության ձևաչափով:

2) Ստրասբուրգում կայացած աշխատանքային-ճանաչողական այցի ընթացքում նախատեսված կարգով ներկայացուցիչը հանդիպեց համապատասխան պաշտոնատար անձանց հետ՝ ունենալով խիտ և երկկողմանի օգտակար քննարկումներ, որոնց արդյունքում ձևավորվեց պատկեր թե՛ կոնկրետ ՀՀ շահերին առնչվող գործերի ընթացքի, սպասվելիք իրադարձությունների, նիստերի, հանդիպումների մասին, թե՛ ընդհանուր՝ մարդու իրավունքների ոլորտին առնչվող ընթացիկ մարտահրավերների, նախաձեռնությունների վերաբերյալ:

Վերոհիշյալի համատեքստում, ի թիվս այլնի, մասնավորապես անհրաժեշտ է առանձնացնել հետևայլը՝

- **Ջորջ Պոլակիևիչի**[1] հետ հանդիպման ընթացքում վերջինիս կողմից հիշատակվեց՝ Եվրոպական կոնվենցիայի հիման վրա իրականացվող մարդու իրավունքների պաշտպանության համակարգի դեմ առկա մարտահրավերը, որն առնչվում էր սույն թվականի մայիսի 22-ին եվրոպական 9-ը պետության կողմից՝ Եվրոպական դատարանի կողմից ձևավորած միգրացիոն խնդիրներին առնչվող նախադեպային իրավունքի կապակցությամբ քննադատական մոտեցումներ և անհամաձայնություն արտահայտող բաց նամակ: Նշվածի շրջանակներում ներկայացուցչի կողմից շեշտվեց, որ ՀՀ-ն չի միացել հիշյալ նախաձեռնությանը և պատրաստակամորեն շարունակում է հետևել Եվրոպական դատարանի համապատասխան դիրքորոշումներին՝ պատշաճ կատարելով Եվրոպական կոնվենցիայի շրջանակներում ստանձնած պարտականությունները:
- Միաժամանակ **Հան Յունչերի**[2] հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին մարդու իրավունքների և ազատությունների ոլորտում իրականացվող բարեփոխումների, սպասվելիք իրադարձությունների և պաշտպաննությանն առնչվող գործողությունների, դրանց թեմատիկ ուղղվածության հետ կապված մի շարք հարցեր: Մասնավորապես, առանձնակի ուշադրություն դարձվեց արհեստական բանականության և մարդու իրավունքների փոխառնչության ոլորտում առկա և նախատեսվող զարգացումներին, ինչպես նաև կիբերհանցագործությունների, այդ թվում՝ օտար տեղեկատվության շահարկման և միջամտության (Foreign information manipulation and interference (FIMI)) դեմ պայքարի արդյունավետացման օրեցօր աճող կարևորությանը:
- **Աբել Կամպոսի**[3] հետ քննարկվեցին կոնկրետ ՀՀ շահերին առնչվող Եվրոպական դատարանում քննվող և արդեն իսկ ավարտված գործերի հետ կապված մի շարք թեմաներ, ընդ որում՝ հավասարապես բովանդակային և տեխնիկական, ընթացակարգային հարցեր (օր.՝ ՄԻՀՆ գրասենյակ-Եվրոպական դատարան հաղորդակցությունն ավելի արդյունավետ ու ճկուն դարձնելու հնարավոր եղանակները): Ներկայացուցչի կողմից ընդգծվեց գրասենյակի այս պահի դրությամբ գերծանրաբեռնվածությունն ու անցումային վիճակը, ինչպես նաև ԵԽ-ի կողմից մշտապես ստացվող ինստիտուցիոնալ աջակցության կարևորությունը՝ դրա շնորհիվ իրականացվող տարատեսակ վերապատրաստումների, մասնագիտական հմտությունների զարգացման ու գիտելիքների արդիականացման համատեքստում:
- Առհասարակ բոլոր հանդիպումների ընթացքում, իսկ ավելի կոնկրետ՝ **Ջիանլուկա Էսպոզիտոյի**[4] կողմից, ի թիվս այլնի, առանձնահատուկ ընդգծվեց

---

[1] Jörg Polakiewicz - Director of Legal Advice and Public International Law Legal Adviser of the Council of Europe

[2] Hanne Juncher - Director of Security, Integrity and Rule of Law of the Council of Europe

[3] Abel Campos – Deputy Registrar of the European Court

[4] Gianluca Esposito - Director General of Human Rights and Rule of Law of the Council of Europe

Եվրոպական դատարանի վճիռների կատարման համատեքստում Հայաստանի Հանրապետության՝ որպես ԵԽ անդամ պետության լավագույն դրսևորումների ու բարձր կատարողական ունենելու հանգամանքը: Ներկայացուցչի կողմից վերահաստատվեց մարդու իրավունքների ու ազատությունների հարգման, պաշտպանության և երաշխավորման ոլորտներում Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտականությունների անվերապահ կատարման սկզբունքային պատրաստակամությունը:

- Նշվածից բացի ներկայացուցիչը նաև իր նախաձեռնությամբ ունեցել է տարբեր ոչ պաշտոնական ձևաչափի ճանաչողական հանդիպումներ համապատասխան բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ, որոնց շրջնականերում ևս, ի թիվս այլնի, քննարկվել են ՀՀ շահերին, ինչպես նաև կողմերի միջև առկա համագործակցության հիմքերի ամրացմանն ու առավել արդյունավետ դարձնելու հնարավոր տարբերակներին առնչվող մի շարք հարցեր:

Կարեն Անդրեասյան՝

24.11.2025թ.